17 սեպտեմբերի 2009 թվականի N 1052 -Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2006 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 2-Ի N 1911-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

---

Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի նոյեմբերի 2-ի «Հայաստանի Հանրապետության մարզերի առողջապահության համակարգերի օպտիմալացման ծրագրերը հաստատելու մասին» N 1911-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները՝

1) որոշման N 6 հավելվածի Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի առողջապահության համակարգի օպտիմալացման ծրագրի «Բերդի տարածաշրջան» բաժնի 6-րդ կետից հանել «անհետաձգելի» բառը.

2) որոշման N 7 հավելվածի Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի առողջապահության համակարգի օպտիմալացման ծրագրի «Հրազդանի տարածաշրջան» բաժնի՝

ա. 2.1-ին կետի երրորդ նախադասությունը «Հրազդանի ծննդատուն» բառերից առաջ լրացնել «Մինչև 2010 թվականի հուլիս ամիսը» բառերով,

բ. 6-րդ կետի երկրորդ նախադասությունը «Ազատել» բառից առաջ լրացնել «2010 թվականին «Հրազդանի ծննդատուն» փակ բաժնետիրական ընկերությունը վերակազմակերպելուց հետո» բառերով.

3) որոշման N 8 հավելվածի Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի առողջապահության համակարգի օպտիմալացման ծրագրի «Մեղրու տարածաշրջան» բաժնում՝

ա. 2-րդ կետն ուժը կորցրած ճանաչել,

բ. 3-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«3. «Մեղրու բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության բոլոր ծառայությունները կենտրոնացնել պոլիկլինիկայի մասնաշենքում՝ ազատելով և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչությանը հանձնելով «Մեղրու բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության հիվանդանոցային մասնաշենքերը՝ շուրջ 3000 քառ. մետր մակերեսով: Բաժնետոմսերի հետգնման և մարման միջոցով նվազեցնել «Մեղրու բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրական կապիտալը»,

գ. 4-րդ կետում «հիվանդանոցի հիմնական» բառերը փոխարինել «պոլիկլինիկական» բառով,

դ. 7-րդ կետի երկրորդ պարբերությունն ուժը կորցրած ճանաչել,

ե. բաժինը 8-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 8.1-ին կետով.

«8.1. «Մեղրու բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերությունը և «Ագարակի հիվանդանոց» փակ բաժնետիրական ընկերությունը միաձուլման ձևով վերակազմակերպել՝ ստեղծելով «Մեղրու տարածաշրջանային բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական

ընկերություն։ «Մեղրու տարածաշրջանային բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության ծառայությունները տեղակայել նախկին «Մեղրու բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության պոլիկլինիկական մասնաշենքում և նախկին «Ագարակի հիվանդանոց» փակ բաժնետիրական ընկերության տարածքում։ «Մեղրու տարածաշրջանային բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերությունը կունենա 45 մահճակալ (20՝ Մեղրի, 25՝ Ագարակ)՝ Մեղրիում թողնելով թերապևտիկ և մանկական ծառայությունները, իսկ Ագարակում կենտրոնացնելով վիրաբուժական, մանկաբարձագինեկոլոգիական և ինֆեկցիոն ծառայությունները։

| «Մեղրու տարածաշրջանային բժշկական կենտրոն» ՓԲԸ | Բաժանմունքները | Մահճակալների ներկա թիվը | Մահճակալների ներկա ծանրաբեռնվածությունը (տոկոս) | Մահճակալների առաջարկվող թիվը |
|---|---|---|---|---|
| Մեղրիի հիվանդանոցային ծառայություններ | թերապևտիկ | 5 | 34 | 10 |
| | վիրաբուժական | 3 | 13 | 0 |
| | մանկական | 6 | 24 | 10 |
| | ինֆեկցիոն | 3 | 19 | 0 |
| | մանկաբարձագինեկոլոգիական | 3 | 35 | 0 |
| ընդամենը | | 20 | 26 | 20 |
| Ագարակի հիվանդանոցային ծառայություններ | մանկաբարձագինեկոլոգիական | 5 | 82 | 10 |
| | թերապևտիկ | 5 | 28 | 0 |
| | վիրաբուժական | 5 | 58 | 10 |
| | մանկական | 5 | 41 | 0 |
| | ինֆեկցիոն | 5 | 100 | 5 |
| ընդամենը | | 25 | 62 | 25 |
| Ընդամենը | | 45 | | 45 |

«Մեղրու տարածաշրջանային բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության բաժնետոմսերի կառավարման լիազորությունները վերապահել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետին»,

զ. 9-րդ կետի առաջին և երկրորդ պարբերությունները շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Այսպիսով, նշված ծրագրի իրականացման արդյունքում մարզի առողջապահության համակարգում կգործեն՝

հինգ բժշկական կենտրոն (Կապան, Քաջարան, Գորիս, Սիսիան և Մեղրի),

անկախ առողջության առաջնային պահպանման կենտրոններ՝ գյուղական վայրերում՝ տասնմեկ (ինն ամբուլատորիա և երկու առողջության կենտրոն),

մարզային նյարդահոգեբուժական դիսպանսեր,

մարզային արյան փոխներարկման կայան։

Ծրագրի արդյունքում ընդհանուր մահճակալային ֆոնդը կկազմի 410 մահճակալ, և կազատվի շուրջ 16520 քառ. մետր մակերեսով տարածք».

4) որոշման N 9 հավելվածի Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի առողջապահության համակարգի օպտիմալացման ծրագրի «Մարալիկի տարածաշրջան» բաժնի՝

ա. 1-ին կետում «10 մահճակալ հզորությամբ (մանկաբարձական՝ 5, թերապևտիկ՝ 3 և մանկական՝ 2)» բառերը փոխարինել «կազմված հիվանդանոցային մասից՝ 5 մանկաբարձական մահճակալ հզորությամբ, պոլիկլինիկական մասից՝ ցերեկային ստացիոնար բուժման 2 պալատով, և շտապ օգնության ծառայությունից» բառերով,

բ. «Ամասիայի տարածաշրջան» բաժնի չորրորդ պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Մարզում առկա 776 մահճակալի փոխարեն մահճակալների թիվը կկրճատվի 196-ով և կկազմի 580 մահճակալ»։

2. Հայաստանի Հանրապետության Կոտայքի, Սյունիքի և Շիրակի մարզպետներին՝

1) մինչև 2010 թվականի հուլիսի 1-ը ավարտել սույն որոշմամբ նախատեսված Հայաստանի Հանրապետության Կոտայքի, Սյունիքի և Շիրակի մարզերի առողջապահության համակարգերի օպտիմալացման ծրագրերից բխող՝ առողջապահական կազմակերպությունների վերակազմակերպման և օպտիմալացման աշխատանքների իրականացումը՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի և «Բաժնետիրական ընկե-

րությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջներին համապատասխան.

2) մինչև 2010 թվականի հուլիսի 31-ը Հայաստանի Հանրապետության կառավարություն և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն ներկայացնել հաշվետվություն Հայաստանի Հանրապետության Կոտայքի, Սյունիքի և Շիրակի մարզերում սույն որոշմամբ նախատեսված առողջապահության համակարգերի օպտիմալացման ծրագրերի իրականացման գործընթացի մասին։

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Տ. ՍԱՐԳՍՅԱՆ

2009 թ. սեպտեմբերի
Երևան